

ՕՆԵԻԿ ԶԻՖԹԵ-ՍԱՐԱՖԻ
ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԺԱՌՍԵՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Օնեիկ Զիֆթե-Սարաֆը (Հովհաննես Աբիսողոմյան) դարասկզբի արևմտահայ գրականության այն դեմքերից է, որի մասին ժամանակին հիացմունքի իրենց խոսքն են ասել նշանավոր գրողներ ու քննադատներ Ա. Չոպանյանը, Արտ. Հարությունյանը, Եր. Օտյանը, Զ. Եսայանը, Վրթ. Փափազյանը:

Մնվել է 1874 թ. հոկտեմբերի 26-ին Պոլսի Սկյուտար թաղամասում: Սկզբնական կրթությունը ստացել է Գատը գյուղի Արամյան վարժարանում: 1889 թ. մտնում է Կեդրոնական վարժարան, ուր սովորում է երեք տարի, մինչև 1892 թ.: Վատանում են հոր նյութական պայմանները, Հովհաննեսը թողնում է ուսումը, մտնում Գր. Շամտանջյանի վաճառատունը գրագրի պաշտոնով: 1902—1903 թթ. Զիֆթե-Սարաֆը մեկնում է Ճամփորդություն: Համփորդությունը հավելվածական անհրաժեշտ այն դասընթացն է, ուր մարդ կը հասունանա և գրողը կը կատարելագործվի», — գրում է հետագայում: Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի համալսարանում կարճ ժամանակ հետևում է բժշկական և իրավաբանական դասընթացներին, այնուհետև լինում է Անգլիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Հունաստանում: Հարուստ տաղավորությունները անջնջելի հետք են թողնում և վերագարծից անմիջապես հետո գրում է «Եվրոպական ճեպընթաց» ուղեգրական ակնարկները, նորավեպեր, պատկերներ, «Միամիտի մը արկածները» (1904 թ., առանձին գրքով՝ 1908 թ.) վեպը:

Դեռևս 1900 թ. «Սուրհանդակ» օրաթերթում, «Մաղիկ», «Մասիս», «Արեւելյան մամուլ» հանդեսներում երևում են երիտասարդ հեղինակի առաջին ստեղծագործությունները՝ թարմ, ինքնության դրոշմ կրող գործեր, որոնք հենց սկզբից ուշադրություն են գրավում: Նա դառնում է սիրված հեղինակ, որի հրապարակախոսական կրքոտ հողվածներին ու քրոնիկներին, նորավեպերին ու պատկերներին ընթերցողները սպասում էին անհամբերությամբ:

1905 թ. սեպտեմբերի 1-ին «Եւրոպի պոմպայի» դեպքից հետո, ի թիվս բաղմամբիվ հայ մտավորականների, ձերբակալվում է նաև Զիֆթե-Սարաֆը: Մոտ երկու ամիս բանտային տաժանքները կրելուց հետո աղատ է արձակվում հանցանշանների բացակայության շնորհիվ: Հետագայում բանտում տեսածները շարադրում է «Թուրք թերորի օրերեն» (1909 թ.) գրքույկում:

Գրողի ամենանշանավոր երկը «Միամիտի մը արկածները» վեպն է, որը Վրթ. Փափազյանի բնոյթով մամբ «անպայման մեծ տաղանդով և վարպետի գրչով գրված, կարող է պատվավոր տեղ գրավել նույնիսկ օտարազգի գրականության մեջ»: Վեպի հաջողությունը ողջունեցին Ա. Չոպանյանը, Եր. Օտյանը, Արտ. Հարությունյանը, Զ. Եսայանը, Մերության Պարսամյանը և ուրիշներ:

Զիֆթե-Սարաֆի նորավեպերի և պատկերների հիմնական թեման սզնիվ տերն է, ճակատագրական գրամաները, հոգեկան խոր ապրումները՝ արտացոլված սոցիալական հենքի վրա: Հերոսները մեծ մասամբ հասարակություններից օտարված, կյանքի դժնդակ պայմաններին մի կերպ հարմարված, իրենց դժբախտության մեջ սակված մարդիկ են. արհեստավորներ, ձկնորսներ, բանվորներ, ուսանողներ, լվացարարուհիներ, որոնք զերծ են մնացել բուրժուական կյանքի ապականող արատներից: Բազմաթիվ նորավեպերում նա առաջ է քաշել կնոջ ազատության և իրավահավասարության հարցը: Գրողի ստեղծագործությունը բուրժուական այլանդակ բարքերի, երեսպաշտության, անբարոյականության ու զանտզան չարիքների քննադատությամբ է ներծծված:

1914 թ. ապրիլին Զիֆթե-Սարաֆը վերցվում է հաշվառման, դառնում թուրքական բանակի զինվոր, սակայն դիմում է փախուստի՝ փրկվելով ազգակործան եղեռնին զոհ զնալու վտանգից: 1919 թ. Պոլսում Հովհ. Ասպետ ստորագրությամբ հրատակարարում է «Հայ միտք» ազգային և գրական շաբաթաթերթը: 1920 թ. Պոլսում լույս է տեսնում Հովհ. Ասպետի «Տեր և տիկին Զրպտի պեյ» գրքուկը: 1920 թ. հայ որբերի գլուխ անցած տարագրվում է հունական Կորֆու կղզին, 1926 թ. անցնում է Ֆրանսիա, ուր Մարսել քաղաքում նշանակվում է հայ ազգային վարժարանի ուսուցիչ: 1929 թ. Ժնևի «Հայ ուսանողների տան» տեսուչն էր: Մահացել է 1932 թ. հուլիսի 11-ին և թաղվել Ժնևում:

Հարուստ է Զիֆթե-Սարաֆի քննադատական ժառանգությունը: Գրական գործունեության հենց առաջին տարիներին նորավեպերի, պատկերների և ակնարկների հետ մամուլում երևացին թարգմանություններ եվրոպական (հատկապես ֆրանսիական) դասական գրականությունից, գրողների դիմանկարներ, գրքերի գրախոսականներ, թատերախոսականներ: «Գրականության մը զարգացումին համար ամենևն մեծ սատարներեն մին օտար լավագույն արտագրությանց թարգմանությունն է,— գրում է Զիֆթե-Սարաֆը:— Մեր մեջ, վերջին տասնամյակներուն քիչ բան թարգմանված է, այն ալ գեշ ընտրված ու գեշ թարգմանված: Անանկ, որ ազգային գրականությունը չէ հարստացած: Մենք ունեցած ենք երանելի թարգմանիչներ հին դարերու մեջ, որ շատ անգամ անգերազանցելի բնագիրները գերազանցած են: Լավ թարգմանություն մը հաճախ ավելի դժվար է, քան որևէ հեղինակություն մը»¹: Առաջնորդվելով վերոհիշյալ սկզբունքով, գրողը պահանջում էր, որ թարգմանիչները մեծ պատասխանատվությամբ ստանձնեն այդ դժվարին գործը: Բացի լեզվի կատարյալ իմացությունից, թարգմանիչը պարտավոր է համակրել թարգմանվող ստեղծագործությանը, հարկավոր է ունենալ բանաստեղծական խառնվածք, մինչդեռ «հայերենի մեջ հասնողը բանաստեղծություն կը թարգմանե և հաճախ կը լղրճե զայն»:

Շնորհիվ գրողի նրբաճաշակ թարգմանությունների, հայ ընթերցողը ծանոթացավ եվրոպական գրականության ընտիր նմուշներին՝ Պոլ Բուլսոնի, Ժան Գասպրենի, Գ. Ֆլոբերի, Հ. Սենկևիչի, Պիեռ Լոթիի, Անատոլ Ֆրանսի, էմիլ Զոլայի, Վ. Հյուգոյի գործերին: Թարգմանությունների ընտրությունից երևում է, որ գրողը հայ ընթերցողին ներկայացրել է ռոմանտիկ, նատուրալ-հոգեբանական և ռեալիստական դարոցների ականավոր դեմքերի ստեղծագործու-

¹ «Նոր լուր», 1925, № 150:

թյունները: Ինչ խոսք, եվրոպական առաջավոր գրականության հետ շփումը վարպետության ու զարգացման առումով գրական ազդեցություն է թողել ևրիտանաարդ գրողի մտքի ու աշխարհայացքի ձևավորման վրա: «Օր շանցնի, որ կես կամ մեկ ժամ չգրադվիմ նշանավոր հեղինակի մը հոյակապ մեկ էջին թարգմանությունովը: Ատիկա գրականության մեջ իմ մարմնամարզս է», — մի առիթով խոստովանել է նա:

Ֆրանսիական գրականությունից բացի Չիֆթե-Սարաֆի գեղագիտական հայացքների ձևավորման վրա զգալի ազդեցություն է թողել նաև ռուսական գրականությունը: Տարբեր տարիների ընթացքում արձակագիրը ուսումնասիրել է Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքը, ռուս նշանավոր գրողների ստեղծագործությունները: «Ամեն ազգի մեծ գրողներու կյանքն ու գործը ուսումնասիրել խիստ հաճելի ու օգտակար աշխատություն մըն է, բայց ռուս գրողները մասնավորապես ու առավելապես կը հանկուցանեն զիս. ոչ մեկ բան այնքան հաճույքով կը կարդամ, որքան ռուսական կյանքն գրվածքներ: Այդ կյանքը այնքան տարբեր է մերինեն, արևմտյանեն, որ ինքնին ինքնատիպ է, իսկ ռուս գրողները, մեծ գրողները, Բուլշին, Լեմոնտով, Տուրգենև, Տոստոևսքի, Տոլստոյ, Կոբրի և այլն. իրենք ա՛լ ավելի արտակարգ ու նորօրինակ են մեզ համար ու հույժ գրավիչ»²: Իր իսկ խոստովանությամբ Չիֆթե-Սարաֆը մոտ քառորդ դար հրապուրված է եղել ռուս գրականությամբ: Ըստ նրա, չինացիք, ճապոնացիները և հեռավոր այլ ժողովուրդներ էլ ունեն իրենց ինքնատիպությունը, բայց «չունին այն գրավիչ հրապույրը, կյանքի տաք ու հորդ ևռանդը, խայտանքը, որ ռուսներուն հատուկ է. անոնք մոմիաներ են կարծես, իրենց հնություն ու բնության մեջը առած, մինչ ասոնք կենդանի, զվարթուն, կարմրալույս քաջողջ ու առույգ ցեղ մը՝ խորապես մարդկային զգացումներով բաբախուն իտեալի խորհուրդներով ու խռովքներով առեցուն, կյանքի նոր արշալույսի մը երկունքովը հղի»³:

Դեռևս առաջին համաշխարհային պատերազմից առաջ Մ. Շամտանջյանի «Ոստան» պարբերականում Չիֆթե-Սարաֆը ժանրթանում է և՛ Տոլստոյի «Աստված կտեսնե ճշմարտությունը, բայց կսպասե» ստեղծագործությանը, մի որոշ ժամանակ տարվում է չարին չընդդիմանալու տոլստոյական գաղափարով, որից շուտով աղատվում է: Արձակագիրը խոստովանում է, որ ռուս գրականության նկատմամբ իր սերը հարատև է եղել և օգտակար, իսկ ընթերցման տված հաճույքը՝ անսահման: «Ոչ մեկ ազգի գրականութենեն էջ մը այնքան հաճույքով կը կարդամ, որքան ռուսական կյանքն առնված գրական հատված մը: Ինչո՞ւ: Ես ալ չեմ գիտեր: Եթե անպատճառ հարկ ըլլար բացատրել գուցե ըսեի, թե կրնար ըլլալ, որ անոր համար կը շահագրգռիմ ու կը սիրեմ այդ կյանքը, որ ան հեռավոր, խորհրդավոր, միամիտ, ինքնատիպ է ու հեքիաթունակ, իր անձանոթ ու ծովածովալ մեծությանը մեջ, անհունապես զանազան ու նորանշան»⁴:

Եվրոպական գրականությունը հեղեղել էր գրական աշխարհը, ընթերցվում էր, վիճարկվում, ընդունվում ու մերժվում և գրողի կարծիքով մարդիկ արդեն գերհագեցած էին «լատին, անգլոսաքսոն և այլ գրականություններով», —

² «Արև», Կահիրե, 1927, № 2670:

³ «Հայաստանի կոչնակ», 1931, № 4, էջ 73 («Դեղնած թուղթեր»):

⁴ Նույն տեղում:

այդ երկրների «կյանքի պատկերներն ու հոգեբանության էջերն»։ Այնուհետև նորություն հրապույր է բերում հյուսիսի՝ սկանդինավյան գրականությունը, բայց «նորությունը անցնելն վերջը ալ առաջին հրապույրը չի մնաց»։ Որովհետև կյանքոտ չէր այդ գրականությունը, այլ «հյուսիսայգի տժգույն ցուրերով առկածող, մշուշոտ, երազային, խորհրդապատկերային»։

Գրողը պնդում է, որ բանաստեղծական սնուշ, հեռավոր, բայց տարտամ, կիսապո ու մթագնած, ժողովրդի կյանքը չպատկերող, սոցիալական պրոբլեմներ չարժարժող գրականության նկատմամբ հետաքրքրությունը, բնականաբար, կարճատև է լինում։ Մինչդեռ ռուսական գրականությունը իր մեջ միահյուսել է հյուսիսի երազայնությունը և հարավի կենսահորդ ջերմությունը, պայծառությունը, ինքնուրույն կյանքի ու իդեալի նորությունը, վսեմությունը, վաղվա՝ «մարդկային լավագույն ապագայի հավատն ու դեպի այն հզոր մղումն ունի»⁵։

Զիֆթե-Սարաֆը առաջարկում է հիմնել հատուկ կազմակերպություն, որը դիսսոլվորի թարգմանական գործը, ընտրություն կատարի, «ի վիճակի լինի մրցելու և հաղթահարելու ժողովրդին ճաշակն ու բարոյականը խաթարող ու հայերին լեզուն աղճատող թարգմանություններ քշող կեղծարարներն ու շահագործողները։ Գրական լավագույն գործեր ընտրել, թարգմանել ու հրատարակել և իբր հացի պես օգտակար ժողովրդին տրամադրության տակ դնել դանոնք ավելի աժան, քան հացը։ Ահավասիկ մեծագործությունը»։

1900 թ. «Սուրհանդակ» օրաթերթում երևաց «Դատարկ կամար» հոդվածը, ուր գրողը սրտի դառնություններ էր անդրադառնում դրական-հասարակական կյանքի ամլությանը, ցույց տալիս դարասկզբի գրական անանկությունը։ Ահավոր բան է գրողի համար տեսնել մայրենի գրականության հեռացումը կյանքից, վատասերումը։ Գրական դատարկ կամարում տարիներ ի վեր «ասուպի պես վառվող ու շուտով մարող նիհա՛ր նիհա՛ր վատույժ թերթիկներ, իբր շաբաթական հանդեսներ ուղեցին երևալ ու պսպղալ ատեն մը ու մեկն ավելի հովերն փչված՝ մարեցան գացին»։ «Գրականություն մը, որ կը մեռնի, ահավոր բան է, որքան ալ սակավատի, որքան ալ հիվանդկախ, որքան ալ անհույս ըլլար արդեն անոր կյանքը։ Երբ գրականությունը կ'մթնե, լեզուն կանդամալուծվի... Հովի պես անցավոր, ծիլի մը պես դողդոջ ու նրբին, բյուրեղի մը պես թափանցիկ, փրցված, փշրված, փսորած կը մնա ան այսօր»⁶։

Ոճիրներ, արկածներ, առևտրական լուրեր, լավ վճարվող զգալացունց դեպքերի նկարագրություններ լցվեցին լրագրերի էջերը և «փոխանակ ռամիկը գրականության մոտեցնելու, գլխավորությունը ռամիկին կ'մոտենար»։ Իսկական գրական կյանքը տեղը գիջում էր քարոզին։ Արտ. Հարությունյանը, Զ. Եսայանը, Զիֆթե-Սարաֆը և ուրիշներ ահազանգեցին գրական անանկության մասին, բոլոր կարող ուժերին կոչելով՝ միանալ ու զարգացնել գրական ավանդները։ Հատկապես սնդիջում պայքար սկսվեց լայն տարածում գտած «Քարոզի մրցման» դեմ, որի նյութական հովանավորողն էր Հ. Թավադյանը։

1903 թ. լույս է տեսնում Զիֆթե-Սարաֆի «Հե՛յ տիրացու մարդիկներ» հոդվածը, որ գրված էր անկեղծ զայրույթի պոռթկումով։ «Եվ ահա քիչ ատեն-

⁵ Նույն տեղում։

⁶ «Սուրհանդակ», 1900, № 517։

վան մեջ, եկեղեցիներն դուրս խուժելով, հրապարակներու վրա, մեր շորս դին պիտի հորդի քարոճ, քարոճ, և ոչինչ բայց եթե քարոճ: Ինչի՞ պիտի ծառայի այս մրցումը»⁷: «Ձանձրացած ենք ալ հռետորական, ուռուցիկ կրկնություններն, շատախոսություններն, շանքարոզներն: Պարզապես տղայություն է նոր նարեկացիներ, Շնորհալիներ սպասել մեր քարոզիչներուն հոժ կարգերեն»⁸: Քարոզիչներ ինչքան ասես կային, մինչդեռ մյուս կողմում «բեղուն տաղանդներ կը գոսանան խեղճության մեջ, զմայլելի արտագրություններ կը փշանան փոշիներուն տակ, աշխարհական միտքը նեղություն կը քաշե հրապարակ ըլլալու, գնահատվելու, օգտակար դառնալուն»:

Ծավալվող բանավեճը տեքստի քան հինգ տարի՝ իր մեջ ներառնելով հողևոր հայրերի, քարոզիչների և գրողների: Գրականությունը կապելով առաջին հերթին կյանքի հետ, Զիֆթե-Սարաֆը առաջարկում էր գնալ նոր որոնումներին, նոր ձևեր, նոր հայտնագործություններ անելու ճանապարհով: Ձաղկել մերժելին, քննադատել զրական էպիգրամությունը, գրողներին տալ կյանքի ճանաչողություն ու ստեղծել ռեալիստական զրականություն՝ ահա որն է հրատապ խնդիրը:

Փորձելով ինչ-որ շահով կանխել բանավեճը, իր «Վաղվան զրականությունը» հոգովածում հարգանքի տուրք էր տալիս Արտ. Հարությունյանին: Բայց նրանից հետո, նշում է գրողը, ամենքը խառնվեցին հարցին, «բերնի ծամոց» արին մոտ քառորդ դար, պարզ խնդիրը վեճի փոխակերպեցին, ավելի շատ թերևս ինքնառեկամի միտումով: Գրողի կարծիքով այս ամենը սին վեճ ու բանակուխտ էր: Նա ավելորդ էր համարում վաղվա զրականության մասին դուշակությունները և դնում էր այն հարցը, թե ո՞րն է լավագույն ուղին վաղվա զրականության համար. «Վաղվան զրականությունը պիտի ըլլա ան, ինչ որ պիտի կերտեն ալսօրվան գործավորները կամքի ուժով և ոչ թե սին վեճերով ու ենթագրական հաշիվներով: Բայց նախ ի՞նչ է զրականությունը ըստ կության: Ան ոչ պոլսական է, ոչ գավառային, այլ ազգային ու համամարդկային: Պոլսական կամ գավառային զրականության վեճը կարծես սոլսեցիի կամ գավառացի եղբայրատյաց խտիրն է, որ կը շարունակվի: Մինչ զրականություն մը ազգային կյանքի ու իրականության մեջ, երբ իր դերն ու պարտքը կատարե, մարդկության ալ ծառայած կըլլա միևնույն ատեն: Ուրեմն անոր ղլխավոր նպատակակետն է ազգին ծառայել, դայն ազնվացնելով, բարձրացնելով անոր արժեքն ու մակարդակը»⁸: Զիֆթե-Սարաֆը դեմ էր անօգուտ վեճերին, ավելորդ կրքերին, չէր ուզում, որ գրողներն ու քննադատները զրականությունը տարանջատեն առանձին մասերի, կոչ էր անում սթափվել և փորձել զրականության ընթացքին հաղորդել միասնականություն, նպատակաուղղվածություն, նպատակելի սկզբնական գրական ու քննադատական պրոցեսի զարգացմանը:

1900 թ. «Բյուզանդիոնում» հրապարակվում է Զիֆթե-Սարաֆի «Գրանենգներու խմբակ մը» վերնագրով տեսությունը, ուր շարունակելով խոսել զրական «անշուք ու խեղդով» մթնոլորտի մասին, գրողը առաջ է քաշում երդիծական զրականության անհրաժեշտության և հրատապության հարցը, քննադատում է կեղծ երդիծաբաններին, որոնք զրականությունից հեռու կանգ-

⁷ «Մաղիկ», 1903, № 44, էջ 481:

⁸ «Նոր լուր», 1926, № 541:

նաժ մարդիկ են՝ դրանենգներ: Ծանոթ լինելով եվրոպական նման հրատարակությունների, կարծելով թե ունեն գլխարձախոսի բնատուր ձիրք, գրանենգները ելգիծաթերթ են բացում, ուր «հասնողը բան մը կը դրե իր երևակայած դվարթ ոճովը ու թերթին էջերը կ'լենան»: Պոռոտ խմբագրականներում ամեն ինչ կար, բացի իմաստից: Լեզվի անմաքրություն, անձնական հարձակումներ, քննափետություն, շատախոսություն, նկարագրի բացակայություն՝ ահա երգիծանքը ըստ գրանենգ-էպիգոնների:

Հարկավոր էր հասկացնել կեղծ երգիծաբաններին, որ բարոյական սնկումը ընտանեկան վատթարացումը նշավակելու, ցուցադրելու, ասեղի հարված տալու ճշմարիտ միջոցը ոչ թե ընդհանուրի քրեիչը դրանց վրա ուղղելու մեջ է, այլ գլխարթ, խնդալից ոճով, «անուշ եղանակով դալն իր ցավին իրազեկ ընելու և անոր դարմանին պետքն ու եղանակը ճանչցնելու» մեջ. «Երգիծանքն էն ապահով ու համայնաբույժ նշտրական է բարքերու վարպետ վիրաբույժի մը ձեռքին մեջ, բարոյական, ընկերային մոլեխինդներու համար: Ամենեն քիչ ցավցնող ու թերևս ամենեն ավելի հաճույք պատճառող եղանակն է անիկա վիրատու մը ատեն: Ինչպես ամեն բաներ թերի հասկցված ու սխալ մեկնաբանված են մեր մեջը, երգիծաբանությունն ալ հոս քաշքշուկի իմաստն առած է ու բոլորովին այլասեռած: Երգիծանքը տարիներ ետքը, նույնքան համով կարելի է կարդալ. քաշքշուկը ցեխ մ'է, որուն վրայեն ոչ ոք պիտի ուզե անգամ մ'ալ անցնիլ. մին կը մնա, հետք կը թողու, մյուսը կը կոխկրտվի, կը ոչնչանա»⁹:

Գրողը վկայակոչում է այն փաստը, որ Եվրոպայում երգիծանքը մեծատարած ու լայնածիր հորիզոններ է գրավել, իսկ մեզ մոտ մատի վրա կարելի է հաշվել իսկական երգիծաբաններին: Նա մեծագույն հարգանքով էր մատնացույց անում Հ. Պարոնյանի, Եր. Օտյանի երգիծական մնայուն, արժեքավոր ստեղծագործությունները. «Շատերու միավորությամբ ու ուժահավաքությամբ հառաջ եկած մեր գրական շատ մը կարճատև երկունքներու, պակասավոր ծրնունդներու ու վաղամեռ շրջաններու մեջ, երգիծաբանական պղտիկ, բայց կենսալիր ու անմեռ հիշատակ մը ունինք միակ անհատի մը ձեռքով հեղակարծված, որ մեր գրական աղքատության ու ժողովրդին մտամշակութայն աննպաստ դրսերևույթին հետ նժարելով, մոլիերյան ջերմաշնչության մը գերհաճույքը տված ըլլալու է մենե առաջիններուն: Եվ իրավցնե մեր գրական ամեն սեռերուն մեջ մեյմեկ Պարոնյաններ ունենալինք միայն, ինքնաբուխ ու հանճարամիտ, թերևս այսօր անարժեք ու վարնոց չըլլար գրական մեր ժառանգությունը՝ որ ահա»¹⁰: Հանձինս Հ. Պարոնյանի, Զիֆթե-Սարաֆը տեսնում էր մի ինքնաբուխ ու հանճարամիտ գրողի, որի ստեղծագործությունները նոր նվաճում էին երգիծանքի բնագավառում: Բացի երգիծաբան լինելուց, Հ. Պարոնյանը նաև ռեալիզմի ու գրականության ժողովրդականության տեսարան էր: Ահա այս նկատի ունեի Զիֆթե-Սարաֆը, երբ ասում էր, թե գրական բոլոր սեռերի մեջ մեկ-մեկ Պարոնյաններ էր անհրաժեշտ ունենալ:

Արևմտահայ գրական կյանքում դարասկզբին տիրապետում էին քննադատության երկու ժանրեր՝ գրախոսություններ և գրողների դիմանկարներ:

⁹ «Բյուզանդիոն», 1900, № 1232 («Երգիծական ու հանրային տեսակետ»):

¹⁰ Նույն տեղում:

1901 թ. Զիֆթե-Սարաֆը սկսում է իր «Սիրված դեմքեր» շարքը, որը բացվում է «Գրիգոր Զոհրապ» դիմանկարով:

«Անոր անունը ձգողություն մը ունի: Հմայք մը կա անոր գրեկներպին, խորհեկներպին և ապրեկներպին մեջ: Հմայած է ան գրողն ալ, չգրողն ալ... Իր եռեկող էությունը մեկ արժանիք, իր տաղանդը երկու արժանիք, իր անկեղծությունը՝ երեք արժանիք ինծի համար»¹¹, — գրում էր երիտասարդ հեղինակը: Նրա համար վարպետության ու ճաշակի մի ամբողջ դպրոց էր Գր. Զոհրապի կյանքն ու ստեղծագործությունը: Նկարագրելով մեծ նովելիստի արտաքինը, ապրեկներպը, հասարակական գործունեությունը, Զիֆթե-Սարաֆն անցնում է նրա ստեղծագործության բնութագրմանը:

«Իր գրականությունն ալ երկու բառի մեջ կարելի է ամփոփել իր էության պես: Խիլախ ու սաստիկ: Սաստիկ՝ լախտի կամ տապալի իջնող հարվածի մը պես, որուն էն թեթև դալմը իսկ վերք մը կը բանա, ցավ մը կուտա, հետք մը կը թողու»: Անուրանալի է Գր. Զոհրապի ծառայությունը ունակիստական արձակի բնագավառում: Զիֆթե-Սարաֆը համոզված էր, որ հենքը, նույնիսկ դրակոն հակառակորդները ևս անկարող են չգնահատել նրան, իսկ ժամանակակիցները «ղղուշավոր ու զարմացկոտ հիացումով մը կը վերաբերվին անոր»: Երիտասարդ գրողին հմայել է Զոհրապի «ցասումի ու ճշմարտության ցուրտ շեշտը» և իր սերնդակիցների հետ «անվերապահ խանդով մը կը սլաշտենք դայն՝ իր գրական ու սիրական խուլանքներովը»:

Պատահական չէ, որ Զոհրապի ստեղծագործության մեջ Զիֆթե-Սարաֆը առանձնացնում է անկեղծությունը, առանց որի չկա և չի կարող լինել իսկական գրականություն: Իր այս միտքը գրողը մեկ անգամ ևս հաստատում է Տիգրան Կամսարականի դիմանկարը կերտելիս: «Իր աշխատախույզը կեղորունը և դաժ էր գրասեր միտքերուն, այն աշխատախույզը, որ առաջին իրապաշտ հայ վնայր լույս տեսավ, թաղային աննշան դպրոցական ուսանողի մը գրչին արդյունք, շատ արժանիքոտ ու գրեթե անօրինակ օրինակ մը մինչև այսօր»¹²:

Զիֆթե-Սարաֆը նշում էր, որ եվրոպական բարքերին քաջատեղյակ, գրականությունն ու կյանքին խորամուխ գրողը միևնույն ժամանակ մնացել է «հայ մը, հայերեն գրող մը, հայ գրող մը, երեք բաներ, գորս թոթափելուն, արհամարհելուն մեջ ինչ հաճույք, գոհացում, փառք կրնան սղմեցնել մենն շատեր, չեմ հուկցեր: Իր ոճն ալ հա՞րկ է ըսել, էն նրբացածն է մեղի ծանոթ ըլլոր ոճերուն մեջ. նուրբ ասեղի մը պես, արագ նետի մը պես և լուսածիր՝ անցորդ ասուպի մը պես»:

Մի առանձնակի սիրով ու ոգևորությամբ է Զիֆթե-Սարաֆը ստեղծել իր սերնդի գրեթե բոլոր գրողների ուսուցչի՝ բանաստեղծ-թարգմանիչ Թովմաս Թերլյանի կերպարը¹³: Այստեղ, անշուշտ, դգալի է Գր. Զոհրապի ազդեցությունը: Զոհրապը շեշտում էր Թերլյանի «մշտաբուրբ հուրը, որ «մոխիր չէ դարձուցած զինքը»: Զիֆթե-Սարաֆը նկատում է նրա «Բոցը նայվածքի» և այն անսպառ կրակը, որ զարմանալիորեն չի նվազում անցնող տարիների հետ: Սերունդներ են եկել, գնացել, տաքացել ու եփվել իր լայնաշունչ ու խանդոտ դասախոսությունների «ջերմաջերմ շոգիեն»: «Ճաշակ, նրբություն և շը-

¹¹ «Մասիս», 1901, № 20, էջ 309:

¹² Նույն տեղում, № 48, էջ 756:

¹³ Տե՛ս «Բյուզանդիոն», 1901, № 1367:

նոր հավետ կը հորդին իրմեն, իր տեսութենեն, իր գրվածքեն, իր բովանդակ-
 էութենեն: Գերազանց գեղապաշտը մերին, աղվորին, մաքուրին, ազնիվին նը-
 վիրված հոգիով, միտքով, դանոնք քարոզած պահուն մանավանդ, առաքյալի
 մը համոզումով ու վերացումով...»:

Գրական աշխարհում կային ուռճացված, հանիրավի բարձրացված «մե-
 ծություններ», որոնց նկատմամբ Զիֆթե-Սարաֆը քննադատական վերաբեր-
 մունք էր դրսևորում: Գրողն այն կարծիքին էր, որ քննադատությունը դուրս
 պիտի լինի անձնականությունից, նեղ եսասիրությունից: Մի առիթով նա գրել
 է. «Քննադատությունը ամենեն դուրսին բանն է, երբ նախանձն է, որ կը ներ-
 շնչե զայն և ամենեն գովարը, երբ անկեղծ ու իրավացի ըլլալ կուզե մարդ»,
 պատշաճության սահմանին մեջ մնալով հանդերձ: Այգ հազվագյուտ պարա-
 դային, քննադատությունը գովասանքի մը համարժեք է և անկե ալելի հա-
 ճույք կը պատճառե»¹⁴:

Զիֆթե-Սարաֆի գրչին են պատկանում զանազան խմբագիրների, հրա-
 տարակիչների, գրողների դիմանկարներ, որոնք իրենց թուղթկուլյան մեջ
 իսկ (կոչվում են վայրկենական) կոնկրետացնում են մարդու, գործչի առա-
 վել կայուն, ցայտուն գծերը: Նման հաջող գրվածքներից են Նշան Պերպեր-
 յանի, Թեոդիկի, Ռուդոլֆ Սամիկյանի (Տոմինո), Ռ. Որբերյանի և այլոց դի-
 մանկարները:

1912 թ. «Շանթ» հանդեսի համարներից մեկը նվիրվում է Ա. Չոպան-
 յանին: Զիֆթե-Սարաֆը սիրով է գրիչ վերցնում իր դպրոցական ընկերոջ
 և մեծանուն զրոյի մասին գրելու: «Ի՛նչ թրթռուն հետաքրքրությամբ կար-
 դացինք իր «Զորքտանիի մը օրագիրը», «Բանաստեղծության մահը», հետո
 բոլոր բանաստեղծություններն ու քննադատությունները, քերթվածները, որոնք
 «Արշալույսի ձայները» կազմեցին, ինչպես նաև «Թուղթի փառքը» իր առա-
 ջին ու վերջին, բայց այնքան զգայուն վեպը: Երկու-երեք տարի անցնելեն
 վերջը հրատարակված իր մեկ քննական երկը Պետրոս Դուրյանի վրա, ինչպես
 նաև Նարեկացիին վրա իր սքանչելի ուսումնասիրությունը» գալիս են ապա-
 ցուցելու, որ Չոպանյանը օժտված է «գրական ու բանաստեղծական» մեծ
 կարողությամբ: Նա հայտնում է իր խորին երախտագիտությունը Չոպանյան
 քննադատին «հին ու նոր հայ գրականության ու գեղարվեստին մատուցած իր
 լուրջ, տքնաջան ու թանկագին ծառայություններու համար»¹⁵:

Նույն «Շանթ» հանդեսում 1918—1919 թթ. երևում են Զիֆթե-Սարաֆի
 «Գեղամ» (Գեղամ Բարսեղյանի հիշատակին) և «Հերոսներ ու նահատակներ»
 (Մալկարացի Կարոն) հոգվածները, ուր բնութագրում է երկու գրչից ընկեր-
 աների կյանքն ու ստեղծագործությունը:

Զիֆթե-Սարաֆը միշտ ձգտել է գրականությունը մոտեցնել ժողովրդին,
 նյութ դարձնել գյուղի, քաղաքի մարդկանց կյանքը: Գյուղացու հոգեբանու-
 թյունը խորթ էր պոլսեցուն: Ահա այստեղ ձևավորվում էր անջրպետ քաղաքի
 և գավառի գրողների միջև: Տարիներ անց, 1925 թ. Համաստեղի «Գյուղը» և
 «Համբույրը» պատմվածքների վերլուծականում, Զիֆթե-Սարաֆը հիացմուն-
 քով էր անդրադառնում գյուղական կյանքի հարազատ նկարագիրը տալու
 գրողի կարողությանը: Համաստեղի հաջողության գաղտնիքը, ըստ նրա այն է,

¹⁴ «Մասիս», 1904, № 18, էջ 280 («Միտքի կաթիլներ»):

¹⁵ «Շանթ», 1912, № 25:

որ նա «ամեն օր, ամեն րոպե իր աչքին առջև ունի գյուղը, գյուղական կյանքը, մարդիկն ու դեպքերը՝ իրենց բովանդակ պարզությամբ մեջ, անոնց պարզ պատմությունները, այնքան ինքնատիպ, այնքան սրտառուչ, այնքան զմայլելի կերպով գրի առնված, որ կը հուզեն, կը նյութեն ու անհատնում են, անանկ, որ Համաստեղ կյանքին մինչև վերջը պատմելիք շահեկան նյութ մը ունի»¹⁶։

Զիֆթե-Սարաֆը օժտված էր քննադատի համար շատ կարևոր հատկանիշով. մեկ գործով, առաջին իսկ ստեղծագործությամբ տեսնել, գուշակել ապագա տաղանդավոր գրողին։ Ահավասիկ, կարդալով Համաստեղի «Գյուղը», գտնում է անթերի և ի պատասխան հեղինակի այն համեստ խոսքին, թե ինքը գեռ սկսնակ է, մի նամակում գրում է. «Սկսնակներ կան, որ վարպետներ կ'արժեն. առաջին անգամ կը պատահի գեթ ինձ այդպիսի մի բան տեսնել։ Եվ եթե այս է սկսնակը, ի՞նչ պիտի ըլլա ան, երբ վարպետ մը ըլլա, տարիներու ընթացքին, աշխատությամբ, կյանքը ապրելով, անոր թափանցելով, փորձառությամբ»¹⁷։ Համաստեղի «Զրույց շունի մը հետ», «Չալոն», «Նասպաստակը» և այլ գործեր համեմատելով ժյուլ Ռենարի պատմվածքների հետ, Զիֆթե-Սարաֆը հաճախ դրանցից բարձր է դասում հայ հեղինակի գողտրիկ ստեղծագործությունները։

Զիֆթե-Սարաֆի ռեալիստական հակումները ավելի վառ դրսևորվեցին հայ գրականության նշանավոր մշակներ՝ Զ. Նսալանի, Ալ. Շիրվանզադեի, Եր. Օտյանի, Դ. Վարուժանի և այլոց ստեղծագործություններին նվիրված գրախոսականներում, նրանց հետ ունեցած նամակագրության մեջ։

Ժողովրդի կյանքը գրականության նյութ դարձնելը, իրականության ռեալիստական արտացոլումը, բարձր գեղարվեստականությունը, գրական լեզվի հարստացումը այն կարևոր օղակներն են, որոնցով հյուսվում է գրական երկի գնահատման ու արժեքավորման գրողի մեթոդը։ Զիֆթե-Սարաֆը գրական էպիգոնության, արխաիվմի, արհեստականության համոզված հակառակորդ էր։ Նա գրողից պահանջում էր բարձր քաղաքացիականություն, ապրած ժամանակաշրջանի հուղող պրոբլեմների համարձակ արժարժում, ապագայի նկատմամբ լավատեսության դրսևորում։ Փառքի հետևից վազող, էժան ծափահսություններ վաստակող թույլ գործերի անօգտակարությունը ցույց տալու անհրաժեշտությունը գիտակցելով, 1904 թ. գրում էր. «Ամեն ասպարեզ, քիչ շատ իր մեղրոտ ու դառն կողմերն ունի, բայց գեղարվեստները ամենն ալելի ունեն իրենց լեզվի ու անուշ կողմերը։ Գեշը հոն է սակայն, որ մեր մեջ, արվեստագետները իրենց ասպարեզին լոկ լեզվին կճաշակեն և մեղրին երազով միայն կ'ապրին»¹⁸։

Նա տեսնում էր, որ ամեն գրիչ բռնող մարդ բուռն փափագ ունի հրապարակ իջնելու, գրելու «եկեղեցու, վարժարանի, հիվանդանոցի վրա»։ «Բարեբախտաբար նույնչափ դյուրին բան չէ նույնիսկ միջակ գրագետ մը, նկարիչ մը, երաժիշտ մը, վերջապես արվեստագետ մը ըլլալ»։ Գրական միջակությունների առատության մեջ հաճախ ստվերի տակ էին մնում արվեստի բարձրարժեք գործեր, որոնք եթե նկատվում էլ էին հաճախ, ապա չէին ստանում արժանի գնահատական։ Այսպես, 1903 թ. Մ. Շամտանջյանի «Մաղիկի»

¹⁶ «Նոր լուր», 1925, № 161։

¹⁷ ԳԱԹ, Համաստեղի ֆոնդ, 1925—1932 թթ., ձեռ. № 197։

¹⁸ «Մասիս», 1904, № 18, էջ 280։

մեջ թերթոնի ձևով լույս է տեսնում Զ. Եսայանի «Սպասման սրահին մեջ» վիպակը, որը պատմում էր մարդկային հոգեբանության, գործազրկության և դրա հետևանքով աղքատության դատապարտված մարդկանց հոգեմաշ կյանքի ողբերգության մասին։ Արտ. Հարությունյանը, Բյուզանդ Քելչյանը, Զիֆթե-Սարաֆը վիպակի առաջին գնահատողներն էին։ Դժգոհելով, որ քննադատների ու գրողների որոշ խմբերի կողմից Եսայանի այս ստեղծագործությունը «իրեն արժանավոր՝ եղանակով չըմբռնվեցավ, չըմբռնվեցավ, չգնահատվեցավ», Զիֆթե-Սարաֆը Եսայանին համարում էր «հասուն ու շքեղ տաղանդ», իսկ վիպակը՝ «գրական գերազանց արտադրություն մը, իսկապես ապրած կյանքե, հոգիով ու հուզումով առի ու բաբախուն, ապշեցուցիչ գեղեցկությամբ տեսարաններով, զմայլելի նկարագրություններով, իր հուլանիությունը մեջ՝ գաղափարով հարուստ, բարոյականով մը»¹⁹։ Ստեղծագործելու առաջին պարտադիր պայմանը Զիֆթե-Սարաֆը միշտ համարել է «ապրած կյանքի» պատկերումը, երբ գրողը ոչ թե հեռվից, գրքերից է պատկերացում՝ կազմում կյանքի երևույթների մասին, այլ ապրում է դրանք, զգում մաշկի վրա։ Այս դեպքում է ստեղծագործությունը դառնում արժեքավոր գրական երկ։

Զաշտվելով համիդյան դաժանությունների, գրաքննության խստությունների և հետամնաց միջավայրի հետ՝ Եսայան ամուսինները 1905 թ. մեկնեցին Փարիզ։ Խոր ափսոսանքով է արձանագրում այդ փաստը Զիֆթե-Սարաֆը իր «Արվեստագետ ամուլը» հոդվածում։ Դառնացած Պոլսում տիրող սառը, անտարբեր մթնոլորտից, որոշ արվեստագետների եսամոլությունից, սրտի ցավով նշում է. «Մեր մեջ, ճշմարիտ տաղանդ մը արժանավորապես գնահատելու համար կամ մեռած պետք է ըլլա և կամ օտարներեն գնահատված։ Մենք մեր մեջը հավասարության սիրահար ենք, և հանդեպ օտարներուն՝ գլխովին հակառակը։ Մենք չենք ընդունիր, որ մենե մեկը մենե ավելի բարձր ըլլա արժանիքով։ Իսկ օտարեն գնահատվածը կը գնահատենք ու կը փառաբանենք։ Մեռածներն ալ կը գնահատենք, ինչու որ վախը չունինք անոնց հետ բաղդատության դրվելու ու ընկճվելու անոնց գերազանց արժանիքին ու բարձրությանը տակ»²⁰։ Հոգվածը սպասածից ավելի հուզում ու աղմուկ առաջ բերեց։ Արամ Անտոնյանը փորձում էր ապացուցել, որ Եսայանը ընկել է օտար ազդեցությունների տակ, որ նրա գործերը «ֆրանսական ընթերցումներու, վերհուշումներու» պտուղ են։ Մի նոր՝ «Արվեստագետ ամուլին շուրջը» հոդվածով Զիֆթե-Սարաֆը պաշտպանում է իր տեսակետը, իսկ «Վերջին խոսք» հոդվածով ամփոփում բանավեճը։

1906 թ. «Արևելյան ամուլի» էջերում տպագրվում է Զ. Եսայանի «Կեղծ հանճարներ» վիպակը։ Երգիծանքի և հումորի խիստ բնութագրումներով է ներկայանում վիպակի գլխավոր հերոսը՝ Տաճատ Զարըքյանը, շփացած, խավար շրջապատում հանճար հռչակված երիտասարդը։ Հեղինակը գլխավոր հերոսին օժտել է հավաքական կերպարի գծերով։ Զիֆթե-Սարաֆի կարծիքով Եսայանը ժամանակի ցավոտ պրոբլեմները գեղարվեստորեն բացահայտելով, կատարել է ճիշտ ընդհանրացումներ։ Շատ դիպուկ է նկատել. «Լավագույն

19 «Արևելյան ամուլ», 1906, № 11, էջ 259։

20 Նույն տեղում։

նյութ մը, լավագույն տեսարան մը, լավագույն վերնագիր մը չէինք կրնար ընտրել», — դրու՞մ է հնայանին: — Պետք է խոստովանել, որ այդ նյութը, այդ տեսարանը, այդ մարդիկը լավագույն նկարիչ մը չէին կրնար գտնիլ»²¹:

Զիֆթե-Սարաֆը մի առանձին սիրով և ուշադրությամբ է հետևել Ալ. Շիրվանզադեի գրչի առնականացման ու ժողովրդականացման պրոցեսին: 1910 թ. «Բյուզանդիոն» օրաթերթում երևում է «Գրական տարի» հոդվածը, որն ամբողջությամբ նվիրված էր Շիրվանզադեին: Այդ թվականը զուգահեռաբար էր նշանավոր դրողի գրական գործունեության 30-ամյակին: «Շիրվանզադե, այսօր իր տաղանդին լրությանը մեջ, վերջին կես դարու հայ գրականության մեջ ամենեն հաստատուն արժեքով, ամենեն կատարյալ ու ամենեն գեղարվեստական գործը արտադրած գրագետն է թերևս, որուն համար ամեն իրավունք ունի այն խանգավառ փառաբանության, որ կը պատրաստվի իրեն համար»²²: Հրատարակության էր պատրաստվում «Շիրվանզադե, կյանքը և գործը» խորագրով հատորը, որին տասնյոթ ականավոր գրողների հետ իր մասնակցությունն էր բերում նաև Զիֆթե-Սարաֆը և 1910 թ. նա իրավունք ուներ կոչելու «Շիրվանին տարի»: Նա բարձր է գնահատում Շիրվանզադեի ստեղծագործությունների ունեցած «Իրական, կյանքոտ» գործեր են «Պատվի համարը», «Եվգինեն», «Չար ոգին», «Նամուսը», որոնք դիտել է մեծ հիացմունքով, որոնց ընթերցումը պատճառել է խոր ապրումներ: «Եվգինեն», ըստ Զիֆթե-Սարաֆի, «ամենագոյություն ու ամենադժգոյություն ունեցող» ու աչքառու, իր նյութին համեստ սահմանին մեջ իր նուրբ դիտողությունով, հուզիչ դրվագներով ու գեղարվեստական շնորհներով»²³:

Իր ամբողջ ստեղծագործության մեջ Զիֆթե-Սարաֆը հիմնականում ուշադրություն էր դարձնում կայուն բարոյականության, ամուր սիրո, ներդաշնակ ընտանիքի, բարձր առաքինությունների պահպանման կարևոր խնդրին: Սա է թերևս պատճառը, որ Շիրվանզադեի դրաման ուրախության մեջ ընդունվեց դրողի կողմից: Նա խոստովանում է, որ ներկայացումը բաղձալի անգամներ դիտելուց հետո, կրկին ու կրկին կարդացել է՝ «ամեն անգամուն ավելի սիրելով, ավելի հուզումով ու ավելի թափանցելով անոր նորանոր աղվորություններուն»: «Եվգինեն» եկավ շշմեցուցիչ հարված տալու կեղծ բարոյականության, երեսպաշտության և հասարակական այլ աղտերի գոյությանը: Հերոսուհու համարձակ ընդվզումը, մերկացումներն ու մեղադրական ոգին ոգևորել են Զիֆթե-Սարաֆին: Ըստ նրա, կյանքի խոր ճանաչողությունը Շիրվանզադեին հասցրել է կենդանի, ընդհանրացնող կերպարներ կերտելուն: Հերոսները միջավայրի հարազատ ծնունդ են: Հեղինակը գտել է «արվեստի մոգության գաղտնիքը», հուզելով հանդերձ մղում է մտորելու, տարվելու, «կենդանի տիպարների», «բաբախուն գործողությունների», «ճշգրիտ, բնական ու հուզիչ տեսարանների» ստեղծած լիարժեք, իրական կյանքով: Ահա Սառաֆյանը՝ «թեթևաբարո, անգործ, մակաբույծ, կենցաղասեր, նրբամիտ ու սրախոս»: Տիկին Գալեմբարյանը՝ «նախանձոտ, չարամիտ, քսու, կեղծավոր կին», Գաբրիել Աղարյանը՝ «իր ցինիկ հրապուրիչի դերին ու

21 ԳԱԹ, Զ. Նսայանի ֆոնդ, ձեռ. № 854, 855:

22 «Բյուզանդիոն», 1910, № 4126:

23 «Շիրվանզադե և իր գործը», Պոլիս, 1911, էջ 293:

բնակությանը մեջ, երբ կուգա իր նախկին հովվերգությունը վերսկսելու հույսով»:

Բացի բարոյական հարցերի արծարծումից, Չիֆթե-Սարաֆին հետաքրքրում էին գեղեցիկի և օգտակարի, բարձր արվեստականության խնդիրները: Գտնո՞ւմ է այս հարցերի պատասխանը դրամայում: «Արվեստեն վերջը,— գրում է նա,— բարոյականն է, որ կը զբաղեցնե քեզ, գեղեցիկեն ետքը օգտակարն է, որ կը ծնի հեղինակին գործեն, հոգեկան վայելքեն վերջը, ազնիվ բարքերու հարցն է, որ կը ցցվի դեմք», բայց գեղարվեստական ստեղծագործության մեջ խառնել այս ամենը առանց ձանձրալի դառնալու, առանց գործողության թափը կոտրելու, «առանց ավելորդ քարոզներով տարվելու, առանց տիպարներուն իրապաշտական ճշտության ու դրվագներուն գերադասյալ խռովչությունը վնասելու, ի՞նչ ճարտարություն, ի՞նչ արժանիք ու ի՞նչ փառք Շիրվանզադեի համար, որ միմիայն «Եվգենեով» հակառակ անո՞ր իր գլուխգործոցը շրջալսուն, պիտի կրնար առաջնակարգ վարպետ մը համարվիլ թատերական սեռին մեջ»²⁴:

Կատարելության մասին խոսելիս Չիֆթե-Սարաֆը խուսափում է թերություններ նշել, համոզում է, որ դրաման զերծ է ավելորդ ու արհեստական տեսարաններից, սյուժեն աչքի է ընկնում սեղմությամբ և գործողությունները ընթանում են համողիչ բնականությամբ «ինչպես կը քալե կյանքն իսկ» և հերոսները կարծես թե պատահամբ ներկա գտնվելով «կյանքի այդ մասնականարին մեջ, կընեն ինչ որ պիտի թելադրեն կյանքին իսկ մեջ, իրենց ձգտումներն ու կրթությունը»²⁵: Նշում է, որ դրաման մնայուն գործ է, «պատիկ ադամանդ մը թեև, բայց տևական փայլով իսկական ու հազվագյուտ ադամանդ մը, որ ինքնին պիտի բավեր, տևական փառք մը ապահովելու զինքը կերտող դորժավորին»²⁶: Չիֆթե-Սարաֆի այս գործը Շիրվանզադեի «Եվգենեն» դրամայի գնահատության առաջին փորձն էր արևմտահայ գրականության մեջ:

Չիֆթե-Սարաֆը բազմաթիվ առիթներով անդրադարձել է իր զրչակից և հոգեկից ընկերոջ՝ Նրվանգ Օտյանի կյանքի դրվագներին, ստեղծագործությունների գնահատմամբ, գրական-հասարակական վեճերի ժամանակ կրակոտ ելույթներով նպաստել է Օտյանի հաղթանակին: Գրողն այն կարծիքին էր, որ պահպանողական հայացքների տեր հրապարակախոս, «Բյուզանդիոնի» խմբագիր Բ. Քեչյանի և Օտյանի հանդիպումը «ի փառս հայ գրականության եղավ», երբ թերթում սկսեց տպվել «Ընկեր Փանջունին»։ «Խմբագիրը լավ գնահատած էր երգիծաբանը»։ «Բայց Առաքելություն մը ի Մապլվարը»,— գրում է Չիֆթե-Սարաֆը,— գլուխգործոց մը դուրս եկավ և եթե Բ. Քեչյան ինք գլուխգործոց մը չունեցավ, «Բյուզանդիոն» Օտյանի այդ գլուխգործոցը առաջին անգամ տպելու բախտն ու փառքն ունեցավ»²⁸:

1920 թ. Պոլսում լույս տեսավ Նր. Օտյանի «Միջնորդ տեր պապան» սոցիալական հարուստ բովանդակություն ունեցող, իրապաշտական երգիծավեպը, վերամշակված ձևով: Գրքում անողորձ ծաղրով դիմակադերձ էին արված բուրժուական խավերը, տիրապետող արատավոր բարքերը, փողի ուժը,

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 300:

²⁶ «Արև», 1927, № 2616:

որով ոչնչացվում էին մարդկային սրբությունները և, վերջապես, հարված էր հասցված հոգևորականությանը: Հետագեմ ուժերն ու հոգևորականությունը, նրանց օժանդակող ուսմավար օրգաններից մեկը բուռն հարձակում ձեռնարկեց Օտյանի դեմ՝ հռչակելով նրան անբարոյական գրող: Այդ օրերին ուսմավարության դեմ կործանիչ հոգվածներով հանդես եկավ Զիֆքե-Սարաֆը՝ Հովհաննես Ասպետ ստորագրությամբ: 1920 թ. «Վերջին լուր» օրաթերթում նա գրում էր. «...Ծանոթ խմբակը աղտոտ պայքար սկսավ անոր (Եր. Օտյանի—Հ. Հ.) դեմ, իբր թե կրոնական նվիրապետության և ուրիշ «սրբությանց ի պաշտպանություն», այլ միայն էսնաֆական ու մրցակցական ու նախանձի շարժառիթներով»²⁷: Հանգես գալով ռեալիզմի դիրքերից, Ասպետը պնդում էր, որ «Միջնորդ տեր պապան» կյանքից փրցված կտոր է, ճշմարիտ ստեղծագործություն, «և գիրք մը, որ ճշմարտության կը ծառայի գերազանց գիրք մըն է, որովհետև ճշմարտությունը և արվեստը նույն բաներն են, ինչպես ըսած է Զոլա»:

Եր. Օտյանի ստեղծած հերոսների մասին խոսելիս հոգվածի հեղինակը ճշտորեն նկատում է, որ նրանք մեծ ընդհանրացումներ են: «Երկու տիպ է ստեղծեր՝ միջնորդ տեր Բարսեղը և խլավուզ նեմզար հանրմը, որ կուզան արժանավորապես կանգնիլ ընկեր Փանջունիներու, Իզնատ աղաններու, Շավարշ Առկերունիներու, Աստիկ Մարկոսյաններու և ուրիշներու կողքին, որ Օտյանի ստեղծած տիպերն են»:

Հակառակորդները բողոքում էին, որ հրապարակվել է «ազգի անկյալ վիճակը». սրանց Ասպետն անվանում է կարճամիտներ: Սի՞թե կրոնական ժողովը անտեղյակ էր այդ «անկյալ վիճակին»: Ոչ: Գիտեր և որոշել էր բանադրանքի ենթարկել համարձակ հեղինակին՝ ճշմարտությունը հրապարակով հայտնելու համար: «Բայց այս ամենն ինչո՞ւ չի նայիր կրոնական ժողովը, որ սինդ փարած է իր աթոռին և քննության որոշում կուտա «Միջնորդ տեր պապային», ղոր ապահովապես էստեքսի պիտի ենթարկեն»:

Սեփական անձի ու ստեղծագործության նկատմամբ խստապահանջ գրողը գոհունակությամբ էր ողջունում մնալուն արժեքների հայտնությունը և անկեղծ զայրույթով դատապարտում ոչ լիարժեք կամ սխալ գնահատումները: Նա վիճում էր Հ. Օշականի հետ, որը փորձել էր նսեմացնել Օտյանի ստեղծագործությունը: 1921 թ. «Վերջին լուր» թերթում հրապարակում է «Օտյան, Օշական, Թեոդիկ» հոդվածը «Գրական անցուղարձ». խորագրի տակ, ուր ըստ արժանվույն գնահատելով մեծատաղանդ Օտյանի ստեղծագործությունը, միևնույն ժամանակ ցույց է տալիս համեստ մշակների, Թեոդիկի և մյուսների անուրանալի ծառայությունները գրականությանը: Հոգվածի հեղինակն այն կարծիքին էր, որ գրականության զարգացման հիմնական ուղեգծերը որոշում են մեծ գրողները: Սակայն կան համեստ տաղանդի տեր, ժրաջան, նվիրված դեմքեր, որոնց գործերը եթե մեռնում են հետագայում, ապա քիչ չեն նպաստում իրենց ապրած օրերի գրական կյանքի ակտիվացմանը, սերունդների ճաշակի հղկմանը, բարքերի ազնվացմանը և այլն. «Ամբողջ սերունդներու մեջ մատի վրա համրվող սակավաթիվներ կան, գերազանց տաղանդավորներ, որոնց գործեն թերևս փշուրներ մնան ապագային, ինչպես Դուրյան, Օտյան, Պարոնյան, Վարուժան և այլն»:

²⁷ «Վերջին լուր», 28 հուլիսի, 1920:

Զիֆթե-Սարաֆը ուշադիր հետևել է իր հասակակից և գրչակից ընկերոջ՝ Դանիել Վարուժանի ստեղծագործական հասունացման պրոցեսին, իր կազմած «Ոսկեմատյանի» մեջ դրել բանաստեղծի «Կալի գիշերը» և այլ ընտիր գործեր: 1921 թ. գրախոսել է Վարուժանի «Հացին երգը» ժողովածուն և բարձր գնահատական տվել:

Իր աստանդական կյանքի ընթացքում շատ ծրագրեր անկատար մնացին: Բարեկամներից մեկին Զիֆթե-Սարաֆը գրում էր, թե իրենք պարտավոր են գրի առնել ժամանակակից նշանավոր դեմքերի մասին իրենց իմացածը, կյանքի դրվագները, հուշերը և հրատարակել ապագա բանասերների համար, որպեսզի այդ նյութերը դառնան նաև «հանրային սեփականություն», որովհետև «առաջիկային ուրիշներ պիտի պրպտեն այդ հիշատակները անոնց՝ որ այդ «մեծ»-երուն մոտ ապրելու առիթն ունեցան ժամանակին»:

1924—1925 թթ. Զիֆթե-Սարաֆը և Վահան Թեքեյանը նախագծել էին ստեղծել «Մտավորականներու տուն» տեսակ մը աշխարհական միաբանությունը՝ հայ գրականության շուրջ», որին նախագահելու էր Եր. Օտյանը, բայց վերջինիս մահը ի չիք դարձրեց արժեքավոր նախաձեռնությունը: Այլ ծրագիր էլ ուներ գրողը: «Պիտի ուղեի կազմել հատոր մը, որուն նյութը ըլլար կենսագրականները, կարճ և անեկդոտիկ, ամեն այն համբավավոր գրողներուն, հայ թե օտար, որոնց կյանքը եղած է արկածալից, տառապագին, վաղագրավ կամ բռնամահ (ինքնասպանություն կամ այլ կերպ՝ ինչպես Շելլի կամ Լերմոնթով), խորհրդավոր և այլն, ինչպես Պալլոն, Աբովյան, Տեմիրճիպաշյան, Դուրյան, Մոբասան, Բուշքին, Թուխթոյ, Ֆլուպեր, Վեռլեն, Բենպո, Վերհարն, էդգար Պո, Օս. Ուայլդ և ուրիշ շատ հանճարեղ ու միևնույն ատեն բնականոն տիպեր. ոչ միայն վերջին աստիճան շահեկան պիտի ըլլար որեւէ արկածախնդրական վեպ մը ավելի, այլ նաև հույժ հրահանգիչ»²⁸:

Առաջին համաշխարհային պատերազմը, հայկական եղեռնը չորս տարուց ավել լոկացրին Զիֆթե-Սարաֆի գրիչը: Թեոդիկի «Ամենուն տարեցույցի» մեջ հրապարակված «Զինվորի նամակներում» նա բացահայտում է իր հայացքներում տեղի ունեցած հսկայական փոփոխությունը, հրաժարվում է Զիֆթե-Սարաֆ գրական անունից և ընտրում Հովհաննես Ասպետ հայկական անունը: Թուրքական բանակի ղինվորի կոշտ հագուստի տակ փշրվել էին նախկին գեղեցիկ զգացումները: Շարունակում է կազմել «Ոսկեմատյանի» չորս հատորները որպես սփոփանք և վշտերի սպեղանի. «Հայ բանաստեղծություն փոքրիկ հավաքածո մը կը նկատեմ աղոթքի շափ վեհ ու մխիթարիչ՝ հոգիի համար և դեղի շափ ազդեցիկ ու բարեբար՝ սիրտին համար: Գրականություն մը, իր ամբողջության մեջ, մեծ մասով դբոսանք մը, ժամանց մը, քմայք մըն էր գրեթե ասկե առաջ. իմս՝ գրական իսկություն մըն է ավելի, հոժ ու պստիկ, բուռն ու ազդեցիկ: Այսպես, չեմ գիտեր քանի թոնո հոգի պետք կա, չեմ գիտեր քանի գրամ ըստիոմ ձեռք բերելու համար: Այդ հոգը, ինքնին ոչ մեկ հատկություն ունի, ըստիոմը ամենազոր է կարգ մը պարագաներում մեջ, իմ ոսկեմատենիկիս հյութը ըստիոմին պես մշտատե, մշտալույս է, ազդու, կենսատու ինձի համար»²⁹:

28 ԳԱԹ, Հովհ. Ավագյանի ֆոնդ, ձեռ. № 2143:

29 «Ամենուն տարեցույցը», 1922, էջ 127:

Ոսկեմատյանները կաղմելիս գրողը սթափ մտքով առանձնացնում է մեայուն արժեքները երկրորդական և անկարևոր գործերից, տեղ է տալիս եղ. Դուրյանի «Այրիին դրույցը», Ռ. Սեալի «Գինով սերը», Դուրյանի «Տրտունջը» և այլ երկերի, ստեղծելով «գմայլելի հավաքածո մը, զոր ամեն սըրտենդ կամ սրտարեկ վարկենիդ կրնաս առնել ձեռքդ և վարկենաբար վերանալ լավագույն աշխարհ մը, փոխվիլ ըլլալ ուրիշ մարդ մը և հանդարտիլ ու սփռվիլ»:

Չիֆթե-Սարաֆը ստեղծում և օգտագործում էր նոր բառեր, ձգտում հարստացնել մայրենի լեզուն: Ըստ նրա, բառերը մտքի եղանակներն են և մտքերի նման օժտված են անվերջ ու անսպառ հնարավորություններով: Ուստի բառերը երբեք չպիտի սահմանափակել. ալ հարկավոր է ստեղծել՝ դրանցից շատերը շեն դիմանա, կմենեն, մյուսները կհարատեն, կհնչեն ու կապրեն:

Հետագա տարիներին գրողը եթե չտվեց ծավալուն ստեղծագործություններ, համեմատյալ դեպս ակտիվորեն մասնակցեց գրական-հասարակական խնդիրների լուսաբանմանը, գրեց բազմաթիվ դրախտականներ, հոգվածներ հայ դրողների և գրական երևույթների մասին: Այս ամենը թույլ է աալիս ասելու, որ ի դեմս Չիֆթե-Սարաֆի, հայ գրականությունն ուներ մի ըննադատ, որն ապրում էր գրականության շահերով և լուրջ ներդրում ունեցավ վաղվա գրականության մեջ:

ЛИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ О. ЧИФТЕ-САРАФА

А. А. АКОПДЖАНЫАН

(Резюме)

Ошик Чифте-Сараф (1874—1932)—один из примечательных деятелей западноармянской литературы, талантливый издатель, публицист и педагог, автор повести «Приключения наивного человека», очерков «В дни турецкого террора», «Господин и госпожа Зепти-Пей», многочисленных рассказов. Его героями являются простые люди, оказавшиеся на дне жизни, лишенные элементарных человеческих прав в буржуазном обществе: рыбаки, мелкие ремесленники, прачки, бедные студенты—с их чистой и бескорыстной любовью, жизненными драмами, глубокими душевными переживаниями. Обширно также критическое наследие писателя. Реалистическое изображение жизни народа, высокая художественность, мастерское владение языком—вот те основные критерии, которыми он оценивал литературное произведение. Заслуживает внимания и его деятельность как переводчика и пропагандиста французской литературы. Чифте-Сараф, писатель и критик, который жил думами и чаяниями своих современников, должен занять свое достойное место в истории армянской литературы.